ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ

Ք.Երևան 21.10.2024թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ հիմնադրամ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստն անցկացվեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երևան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին 20 անդամներից 12-ը՝

Կարեն Գիլոյանը - ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Խորհրդի նախագահ,

Գոհար Մամիկոնյանը - ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ,

Սերգեյ Աբրահամյանը - ՀՀ ԿԳՄՍ նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ,

Դավիթ Մոսինյանը - «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Հարություն Յավրյանը - ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ,

Աշոտ Տիրացույանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս,

Անահիտ Բարսեղյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս,

Եկատերինա Նահապետյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս,

Նարինե Մարե-Գասպարյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս,

Ժիրայր Դավեյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող,

Լաուրա Միրզոյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Սուրեն Եղիազարյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող,

Հեղինե Սարկիսյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող,

Սուսան Ավետիսյան - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմի կառավարման ֆակուլտետի ուսանող:

Բացակայում էին՝

Արսեն Միխայլովը - ՀՀ վարչապետի օգնական,

Արսեն Հակոբյանը - ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության պետ,

Սամվել Գևորգյանը - Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն,

Էդուարդ Քալանթարյանը - Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան,

Ռոբերտ Խաչատրյանը - Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ,

Լուսինե Տանաջյանը - ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս:

Նիստն իրավազոր էր:

Նիստին ներկա էին նաև «Քրոու Արմենիա» ՍՊ ընկերության ներկայացուցիչները, որոնք իրականացրել էին ՀՖԿՍՊԻ հիմնադրամի անկախ արտաքին աուդիտը:

Խորհրդի նախագահն առաջարկեց սկսել նիստն ու հաստատել նիստի օրակարգը:

Նախքան օրակարգի հաստատումը առաջարկվեց փոխոխություն մտցնել դրանում՝ ավելացնելով Խորհրդի քարտուղարի ընտրության հարցը:

Օրակարգը դրվեց քվեարկության հետևյալ ձևակերպմամբ՝

1.Օրակարգի հաստատում.
2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն.
3.ՀՖԿՍՊԻ հիմնադրամի 2023 թվականի արտաքին անկախ աուդիտորի հաշվետվության և եզրակացության ներկայացում և հաստատում.

4.ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթի հայտարարում:

Հարց 1

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Հարց 2

Խորհրդի քարտուղարի ընտրության հարցի քննարկման ժամանակ Խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին թեկնածություններ Խորհրդի ուսանողական համակազմի ներկայացուցիչներից:

Քվեարկության դրվեց Լաուրա Միրզոյանի թեկնածությունը:

Միաձայն որոշվեց՝ Խորհրդի քարտուղար ընտրել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող Լաուրա Միրզոյանին:

Հարց 3

ՀՖԿՍՊԻ հիմնադրամի 2023 թվականի անկախ աուդիտորի հաշվետվությունը և եզրակացությունը Խորհրդին ներկայացնելու համար ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը խնդրեց խոսքը փոխանցել «Քրոու Արմենիա» աուդիտորական ընկերության ներկայացուցիչներին, որոնք իրականացրել էին ՀՖԿՍՊԻ հիմնադրամի արտաքին անկախ աուդիտը:

Աուդիտորները Խորհրդին ներկայացրին ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն ու Անկախ աուդիտորի եզրակացությունը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ՀՖԿՍՊԻ հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին անկախ աուդիտորի կողմից ներկայացվեց վերապահումով կարծիք, որի հիմքերն են՝

- *Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումից առաջ պաշարների գույքագրում չիրականացնելը, որը բացի առկայության մասին համոզումից, թույլ կտար պարզելու որակական հատկանիշները կորցրած պաշարների առկայությունը: Արդյունքում պաշարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված են 30,753 հազար դրամով: Ղեկավարությունը պաշարները չի ներկայացրել ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, այլ դրանք ներկայացրել է միայն ինքնարժեքով, ինչը հանդիսանում է շեղում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից: Հիմնադրամի գրանցումները ցույց են տալիս, որ եթե ղեկավարությունը պաշարները ներկայացներ ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, ապա անհրաժեշտ կլիներ պաշարները առնվազն 17,255 հազար դրամով նվազեցնել մինչև դրանց իրացման զուտ արժեք: Հետևաբար,*

ծախսերը կավելանար 17,255 հազար դրամով, միևնույն ժամանակ տարվա շահույթը և զուտ ակտիվները կնվազեին նույն չափով:

Միևնույն ժամանակ, անկախ աուդիտորները չեն կարողացել այլընտրանքային միջոցների կիրառմամբ համոզվել 2022 և 2023 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պաշարների վերաբերյալ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ներկայացված են համապատասխանաբար 28,889 հազար և 30,753 հազար դրամ գումարներով:

- *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) նկատմամբ առկա է ստացված ուսման վարձի փոխհատուցման գումարի մասով մնացորդ (կրեդիտորական պարտք) 203,204 հազար դրամի չափով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 95,933 հազար դրամ): Սակայն համաձայն Նախարարության կողմից ներկայացված տվյալների՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի նկատմամբ դեբիտորական պարտքի մնացորդը զրո է: Աուդիտորները չեն կարողացել այլընտրանքային միջոցների կիրառմամբ համոզվել 2022 և 2023 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա Նախարարության նկատմամբ պարտքի մնացորդի վերաբերյալ:*

Խորհրդի անդամները քննարկեցին անկախ աուդիտորի կողմից ներկայացված եզրակացությունն ու դրանում բարձրաձայնված խնդիրները:

Խորհրդի անդամ Աշոտ Տիրացույանը հարց հնչեցրեց Գնման գործընթացների բացահայտումների և եզրակացությունների վերաբերյալ: Մասնավորապես, ՀՖԿՍՊԻ հիմնադրամի աշխատակիցների հետ կնքված քաղիրավական պայմանագրերը և վարձատրությունները:

Անկախ աուդիտորի կողմից հնչեց պարզաբանում, որ 2019 թվականից տարբեր ֆիզիկական անձանց հետ, գնումների օրենսդրության իրավակարգավորումից դուրս, կնքվել են շուրջ 20.142.711.0 ՀՀ դրամի տարատեսակ ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման քաղիրավական պայմանագրեր:

Խորհրդի անդամ Հարություն Յավրյանը խոսեց կրկնակի անկախ աուդիտ անցկացնելու և ներկայացված բացահայտումների վերաբերյալ առավել մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրություն անցկացնելու անհրաժեշտության մասին:

Խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանը առաջարկեց շարունակել աուդիտորական ուսումնասիրությունը՝ այլընտրանքային միջոցների կիրառմամբ՝ համոզվելու անկախ աուդիտորի կողմից ներկայացված բացահայտումները, որով պայմանավորված էլ Խորհուրդը կկարողանա որոշում ընդունել իր հետագա անելիքների վերաբերյալ:

Հարցը դրվեց քվեարկության:

Միաձայն որոշվեց ընդունել անկախ աուդիտորի կողմից ներկայացված եզրակացությունը ՀՖԿՍՊԻ հիմնադրամի 2023 թվականի ֆինանսական վիճակի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, վեր հանված խնդիրները բազմակողմանի և այլընտրանքային միջոցների կիրառմամբ ուսումնասիրելու և դրանցում համոզվելու համար կրկնակի աուդիտ անցկացնելու նպատակով ընդունել առաջարկություններ անկախ աուդիտորի կողմից:

Հարց 4

Քննարկվեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթի հայտարարման հարցը: Հարցի քննարկման ժամանակ Խորհրդի անդամները ծանոթացան ռեկտորի թափուր պաշտոնին դիմելու պայմաններին, թեկնածուներին ներկայացվող պահանջներին և մրցույթի անցկացման ժամանակացույցին:

Ռեկտորի պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

1. Ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում Խորհրդի նախագահի անունով, իսկ Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվողի գրավոր համաձայնությունը.
2. Լուսանկար 3*4 չափի.
3. Ինքնակենսագրություն (CV).
4. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճեն.
5. Տեղեկանք մշտական բնակության վայրից.
6. Անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն.
7. Հրապարակված գիտական աշխատանքների ցուցակ.
8. Հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո.
9. Այլ փաստաթղթեր, որը հավակնորդը համարում է նշանակալի՝ ընտրության համար:

Ռեկտորի պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է՝ համարակալված և յուրաքանչյուր էջի հետնամասում դիմումատուի կողմից ստորագրված վիճակում Խորհրդի քարտուղարի անունով, փոստային առաքման միջոցով կամ առձեռն եղանակով՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11 հասցեով, կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ info@sportedu.am հասցեին:

Առձեռն եղանակով փաստաթղթերը կարող են ներկայացվել ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9.00-ից 17.00-ը:

Փաստաթղթերը ընդունելու ժամանակահատված սահմանել՝ ս.թ նոյեմբերի 1-ից նոյեմբերի 30-ը ներառյալ:

Մրցույթի անցկացման օր սահմանել՝ ս.թ դեկտեմբերի 10-ը, ժամը 16.00-ն, ՀՀ, ք. Երևան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ, Գիտական խորհրդի նիստերի դահլիճում:

Հարցը դրվեց քվեարկության:

Միաձայն որոշվեց, ղեկավարվելով ՀՖԿՍՊԻ հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետի և 55-րդ կետի դրույթներով, հայտարարել բաց մրցույթ՝ ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար:

Խորհրդի նախագահ՝ Կարեն Գիլոյան

Խորհրդի նիստի արձանագրող՝ Գոհար Մամիկոնյան

Ստորագրված է
29.10.2024թ.